Հասցեատեր՝

«Փյունիկ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcpyunik.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30.08.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	Կ-001
Խախտում՝	«Փյունիկ» թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի կողմից • պատշաճ վարքագծի հիմնական կանոնների խախտումը, • սպորտային միջոցառումները ոչ սպորտային բնույթի դրսևորումների համար օգտագործելը, • ՀՖՖ հեղինակությունը, ՀՖՖ համապատասխան մարմինների և ղեկավար կազմի վարկաբեկումը • (Հոդված 9-ի 2-րդ կետի 1.2, 1.3, 1.4-րդ ենթակետեր)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Որակազրկել «Փյունիկ» թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանին 7 (յոթ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2023 թվականի օգոստոսի 31-ից սկսած:
2. Որոշման 1-ին կետով սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 4 (չորս) խաղ պայմանականորեն չկիրառել և «Փյունիկ» թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանին նկատմամբ փորձաշրջան սահմանել 4 (երեք) ամիս ժամկետով՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահի կամ նրա կողմից որոշված անձի կողմից նշանակված ժամանակավոր միջոցները կարող են բողոքարկվել Կանոնակարգի դրույթներին համապատասխան: Այնուամենայնիվ, բողոքարկումը պետք է գրավոր և հիմնավոր ներկայացվի ՀՖՖ բողոքարկման կոմիտեին բողոքարկվող միջոցի մասին ծանուցումից հետո երեք օրվա ընթացքում: Տվյալ բողոքներով բողոքարկման վճար չկա: Բողոքարկման կոմիտեի նախագահը կամ նրա կողմից առաջադրված անձը որոշում է կայացնում նման բողոքների վերաբերյալ միանձնյա: Նման որոշումները վերջնական են: